



ISSN: 1829-1651



ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՕՐԵՐԻ ՀԵՏ

ԵՄ-ը մեղսակից՝ ընտրախախտումներին

ՎԱԿՈՔ ԱՎԵՏԻՔՅԱՆ

Մեղսակից է ոչ միայն մեր ընտրություններում զրանցված, արձանագրված, վիճարկված, բողոքարկված ու դեռ շարունակվող «սահմանադրական» խժոժությունների, այլև նույնիսկ եվրոպական երկրների նկատմամբ Բրյուսելից դեկլարվող դավադրությունների համար: Մեղսակցություն՝ որն արդեն մեկ միլիոնից ավել մարդկանց կյանք է խլել ռուս-ուկրաինական պատերազմի հրահրման հետեւանքով, քաղաքական, սոցիալական ու տնտեսական լրջագույն տագնապներ ստեղծել նորընծա թե հին անդամ երկրներում՝ առաջնորդվելով հակառուսականության, հակաանկախականության եւ հակահիքնականաւարման իր սկզբունքներով՝ հասնելով մինչեւ Կովկաս եւ Ճակատագրական հարված հասցնելով մեր Արցախին՝ Հայաստանում ծնունդ տալով ապագգային մի իշխանության, որի ծագումնաբանությունը դեռեւս հստակ չէ մեզ համար, հակառակ որ շարունակում է մեր երկիրը, արդեն 8 տարի, դեկավարել եւ ամեն զնով հակազգային ուղով առաջնորդել:

Դեռեւս մեկ տարի առաջ էր, որ, այսպէս կոչված միջազգային քաղաքառազմագիտական հոլովույթների մասնագետ վերլուծաբանները կանխատեսում էին քաղաքական ներքին պայթյուն՝ կողմնակիորեն հետեւանք նաեւ թրամփյան արտառոյ, ավելի մեղմ՝ ոչ ընթացիկ քայլերի պայմաններում: Վերլուծաբանները կանխատեսում էին աններդաշնակ շարժումներ, որոնք հարցականի տակ կդնեին Եվրոմիության կազմակերպական գոյությունը:

Առաջին պոռթկումը հնչեց Հունգարիայից, որը լինելով սովետական տիրապետության դեմ առաջինը ընդվզած «սոցիալիստական» պետությունը, տառապած լինելով Կարմիր բանակի պատժիչ-ճնշիչ գործողություններից, եւ ի վերջո արցունք թափելուց հետո ազգային հերոս Մազիար Կոմսի արձանի տակ, միշտ է ունեցել ազգային արժանապատիվ կեցվածք դրսեւորելու իր եզակիությունը սոցիալիստական մյուս երկրների, նույնիսկ Լեհաստանի ու Չեխոսլովակիայի նկատմամբ, հախուռն բնավորությամբ իր առաջնորդի՝ վարչապետ **Վիկտոր Օրբանի** գլխավորությամբ, որի հետ, ի դէպ, 1996-ին Բուդապէշտում, լիբերալ-դեմոկրատների միջազգային համաժողովի շրջանակներում ՌԱԿ մեր պատվիրակությունը հանդիպել ու նրա իսկ հանձնարարությամբ Երեւան վերադարձին ստեղծել հունգարահայ մեր ոչ մեծ համայնքի համար սահմանադրություն, որով մերոնք դեկավարվում են առայսօր:

Վիկտոր Օրբանն էր, որն այլապէս զգվելի անուն է մեզ համար՝ հայոց բանակի սպա Գուրգեն Մարգարյանին քնած տեղը կացնով սպանած ռճրագործ Սաֆարովին Ադրբեջան արտահանձնելու համար,- պայթեցրեց առաջին ռումբը ընդդէմ Բրյուսելի համաեվրոպական վերնախափի եւ դրա «թագուհին» համարվող **Ուրսուլա Ֆոն դեր Լեյդնի**: Օրբանը խստորեն մեղադրեց վերջինիս կոռուպցիայի, կամայականության, միլիարդավոր դոլարների մսխման համար, ինչը պատճառ դարձավ, որ «թագուհու» ջանքերով Օրբանը կորցնէր իր աթոռը եւ հայտարարվէր նոր ընտրություն:

⇒2

Աժ-ն՝ արագ ռեժիմով օրենքներ է ընդունում

Սահմանադրական դատարանը 7 քաղաքական ուժերի (մնացել էին 6-ը) դիմումներով դատաքննության փուլն ավարտել է եւ անցել խորհրդակցական սեյսակ. որոշումը կիրաւարակվի հուլիսի 4-ի երեկոյան: Ինչ որոշում էլ կայացնի ՍԴ-ն՝ հետընտրական շարժը հազիվ թե ավարտվի, բայց գոնե հայտնի կդառնա, թե արդյոք ընդդիմությունը վերցնո՞ւմ է Աժ մանդատները: Մենք մեր թերթի ինտերնետ տարածքում ՍԴ որոշումից հետո անդրադարձ կանենք իրավիճակին, հետեւեք, մինչ այդ մի քանի այլ թեմա:

Իշխող ԲԴ-ն արդեն ապագա խորհրդարանի նախագահի, փոխնախագահի թեկնածուներ ունի՝ Ռուբեն Ռուբինյան, Վահագն Ալեքսանյան, Հայկ Կոնջորյան, Աժ խմբակցության ղեկավարի թեկնածուներ եւս առաջադրել է՝ ղեկավարման քարտեզից դուրս թողնելով Աժ ներկայիս նախագահ Ալեն Սիմոնյանին, ինչը տարբեր ենթադրությունների եւ վարկածների առիթ է դարձել:

Բայց էլ ավելի ուշագրավ բան կատարվում է ներկա խորհրդարանում, որտեղ արագ-արագ



հանձնաժողովներում հավանություն ստացան եւ արտահերթ նիստի օրակարգում ընդգրկվեցին օրենսդրական նախաձեռնություններ, որոնք սահմանադրական մեծամասնության քվե էին պահանջում: Կարծես թե ԲԴ-ն շտապում է ընդունել բոլոր այն օրենքները, որոնց ընդունումը հետո դժվարանալու է՝ նոր խորհրդարանում

սահմանադրական մեծամասնության չունենալու պատճառով:

Զգիտեմ, թե ովքեր են դրդում իշխանությանն այնպիսի օրենքներ ընդունել, որոնց հոգեբանական ազդեցությունն հատկապէս հետընտրական այս փուլում խիստ զգայուն է, անդրադարձը՝ հանրային նշանակության, ընկալումը՝ ոչ միանշանակ:

⇒6

Պայքար Բնեսերում Հայոց ցեղասպանության առաջիկա օրհնագծի դեմ

ԱՆԱՇԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

Հունիսի 25-ին Իսրայելի ԱԳ նախարար **Գիդեոն Սաարը** գրառում էր արել X-ում՝ «կառավարության հաջորդ նիստում նախագիծ կներկայացնեն, որ նպատակաուղղված կլինի Իսրայելի կառավարության՝ Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչմանը: Սա Իսրայելի պատմական եւ բարոյական պարտքն է հայ ժողովրդի հանդեպ: Այդու այն նաեւ դատաւարտելու է պատմական ճշմարտության որեւէ ժխտում, նվազեցում եւ աղավաղում: Այնուհետ բանաձեւը կներկայացվի Բնեսերում քվեարկության»:

Հունիսի 28-ին Սաարը կարճ ձեւակերպեց՝ «Երբեք ուշ չէ ճիշտ անելու համար», իսկ միջազգային լրահոսի ամենաընթերցվող վերնագիրը դարձավ՝ «Իսրայելի կառավարությունը միաձայն ճանաչեց Հայոց ցեղասպանությունը»: Ո՞ւմ էր հետաքրքրում Իսրայելի ճանաչումը:

Տունասանի նախկին վարչադէսը Իսրայելին կոչ է արել ճանաչել նաեւ հույների եւ ասորիների ցեղասպանությունը

Լրատվականների առցանց տարբերակներում առկա սոցցան-

ցային մեկնաբանությունների ընթերցումը կերտում է մի պատկեր, ըստ որի այն հետաքրքրում է քաղաքականությամբ, պատմությամբ եւ արդարության հանդեպ հավատը չկորցրած մարդկանց, մեր դիտարկմամբ՝ մի քանի ազգի՝ հրեաներին, հայերին, թուրքերին, ազերիներին, գերմանացիներին, հույներին, քրդերին, ասորիներին:

Greek city times լրատվականը հունիսի 29-ին անդրադարձել էր Իսրայելի ճանաչմանն՝ ընդգծելով, թե կառավարության միաձայն որոշումն անդրադառնում է Օսմանյան կայսրության՝ քրիստոնյաների հանդեպ ցեղասպան քաղաքականությանը, որին զոհ են դարձել հայեր, հույներ եւ ասորիներ: Իսկ Հունաստանի նախկին վարչապետ **Անտոնիս Սամարասը** Իսրայելին կոչ էր արել ճանաչել նաեւ հույների եւ ասորիների ցեղասպանությունը: Ուստի Իսրայելի կառավարության՝ Հայոց ցեղասպանության ճանաչումը միավորել էր թուրքական աշխարհի վայրագությունների մասին չմոռացած հույներին եւ ասորիներին, ինչը պառակտվող աշխարհում կարեւոր համերաշխություն է:

«Եվրոնյուզ»-ի, ntv-ի գերմաներեն խմբագրությունները, ավստրիական ORF-ը հակիրճ անդրադարձան Իս-

րայելի ԱԳ նախարար Սաարի՝ պատմության ճանաչման հանձնառությանը եւ դրան հետեւած Իսրայելի կառավարության որոշմանը, գերմանական «Բայրիշե ռունդֆունկը» (BR), «Շպիգելը», taz-ն իրենց հրապարակումներն առանց ուղղորդման վերնագրեցին «Իսրայելի կառավարությունը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը», իսկ «Բեռլինըր ցայթունգը»՝ հունիսի 28-ի վերնագրում ավելացրեց՝ «Ազդանշան Թուրքիայի՞ն» ենթատողը: «ԲՑ»-ի մեկնաբանը հղում անելով իսրայելական Ynet լրատվականին գրում է, թե Իսրայելը հապաղում էր պաշտոնապէս ճանաչել Հայոց ցեղասպանությունը՝ նկատի առնելով Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ ստրատեգիական հարաբերությունները:

Տեւական մամուլը Իսրայելում եւ Եվրոպայում տարբեր ճեւատումներ է լուսարանում

Շվեյցարիայում լույս տեսնող հրեական շաբաթաթերթը՝ tachles-ը, հունիսի 28-ին անդրադառնում է Իսրայելի կառավարության միաձայն ճանաչմանը՝ հատուկ ընդգծելով արտգործնախարար Սաարի խոսքը՝ «Երբեք ուշ չէ ճիշտ անելու համար»:

⇒3

ԳՐԻԳՈՐ
ԱՌԱՔԵԼՅԱՆԻրանում ՀՀ նախկին
ղեկավար

Իսրայելի կառավարության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման մասին լուրը շատերի մոտ կարող է հուզական արձագանք առաջացնել: Ոմանք կասեն, որ հրեական պետությունը վերջապես պատմական արդարության կողմն է կանգնել եւ հաղթահարել այն քաղաքական բարդույթները, որոնք տասնամյակներ շարունակ խոչընդոտում էին նման որոշմանը:

Սակայն միջազգային քաղաքականությունը հազվադեպ է առաջնորդվում բարոյական զգացումներով: Այն առաջնորդվում է միմյան շահերով:

Հետեւաբար, այս որոշումը գնահատելիս առավել կարելի է հասկանալ, թե ինչու հիմա Իսրայելում «խիղճ արթնացավ», այլ այն, թե ինչու հենց այս պահին Հայոց ցեղասպանության ճանաչումը դարձավ Իսրայելի արտաքին քաղաքականության գործիք:

Պատասխանը պետք է փնտրել ոչ թե պատմության, այլ տարածաշրջանի ներկա աշխարհաքաղաքական իրողությունների մեջ: Այսօր Թուրքիան եւ Իսրայելն աստիճանաբար վերածվել են տարածաշրջանային մրցակիցների: Եթե նախկինում երկու երկրների հարաբերություններում առկա հակասությունները հնարավոր էր զսպել ռազմավարական համագործակցության միջոցով, ապա այժմ այդ հակասությունները տեղափոխվել են բաց քաղաքական դիմակայության փուլ:

Այս պայմաններում Հայոց ցեղասպանության ճանաչումը դառնում է ոչ միայն պատմական արդարության ակտ, այլեւ Անկարայի նկատմամբ քաղաքական ճնշման արդյունավետ միջոց:

Կարծում ենք՝ նույնիսկ կարելի է, թե ինչ հանգամանքներ են Իսրայելին դրդել Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու: Կարելի էր հանգամանքների բերումով մեր շահերի համընկնումն է: Նույնիսկ եական չէ, թե պաշտոնական երեւանն ինչպես կարծազանքի այդ փաստին կամ ընդհանրապես կարծազանքի՞, թե՞ ոչ:

Մի կողմ դնելով հրեաների մոտ խիղճ արթնանալու մասին հուզական դատողությունները՝ արձանագրենք, որ այսօր Թուրքիան եւ Իսրայելն ունեն միմյանց չհամոզողովու բազմաթիվ պատճառներ: Այդ երկու պետությունների միջեւ նույն

Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը. դասական արդարություն, թե՞ աշխարհաքաղաքական գործիք



նիսկ պաշտոնապես կասեցված են տնտեսական հարաբերությունները:

Անկարան համոզված է, որ Թուրքիայի անվտանգության սահմաններն այսօր սկսվում են Հայեպից, Դամասկոսից եւ Բեյրութից, ուստի Իսրայելին «սթափեցնելու» հրամայականը Թուրքիայում համարվում է առաջնահերթություն:

Թուրքիայի նախագահ **Էրդողանը** հունիսի 10-ին հայտարարել է, որ Իսրայելի հարձակումները Սիրիայի եւ Լիբանանի վրա հասել են այնպիսի մակարդակի, որը սպառնում է Թուրքիայի անվտանգությանը:

Նա սիրնիզմը բնութագրել է որպես վտանգավոր եւ ծայրահեղական գաղափարախոսություն, որը սպառնալիք է Թուրքիայի եւ ամբողջ աշխարհի համար: Դրանից ելնելով՝ Էրդողանը կոչ է արել դիմակայել սիրնիզմի ծայրահեղական գաղափարախոսությանը:

Իսրայելի վարչապետ **Բենի-ամին Նեթանյահուն**, իր հերթին, Էրդողանին անվանել է «հրետայաց բռնապետ», որը «ճնշում է իր հակառակորդներին, ցեղասպանություն է իրականացնում քրդերի դեմ, աջակցում է ՀԱՄԱՍ-ին, ճնշում է սեփական ժողովրդին եւ բանտարկում քաղաքական ընդդիմախոսներին»: Նեթանյահուի խոսքով՝ Էրդողանը վերջին մարդն է, որը կարող էր իրեն եւ Իսրայելին բարոյականության դասեր տալ:

Թուրքիայի եւ Իսրայելի միջեւ լարվածությունն ավելի սրվեց նաեւ Թուրքիայի ներքին գործերի նախարար **Մուստաֆա Չիֆթչի**ի հայտարարություններից հետո: Իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության համաժողովում նա կոչ արեց «ազա-

տագրել» Երուսաղեմը՝ հայտարարելով. «Ինչպես տեսանք Դամասկոսի, Հայեպի եւ Ղարաբաղի ազատագրումը, այնպես էլ Աստծո կամքով մի օր կտեսնենք Երուսաղեմի ազատագրումը»:

Իսրայելի պաշտպանության նախարարը, անդրադառնալով «Ղարաբաղի ազատագրումը տեսած եւ Երուսաղեմի ազատագրումը երազող» Չիֆթչիի հայտարարությանը, պատասխանել է. «Երուսաղեմը Կոստանդնուպոլիս չէ, եւ Օսմանյան կայսրությունը, որի վերածննդի մասին երազում է Էրդողանը, վաղուց արդեն փլուզվել է»:

Ավելորդ ենք համարում նաեւ հիշեցնել, որ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար **Մարկ Ռյուտեի** հետ վերջերս կայացած հանդիպման ընթացքում **Դոնալդ Թրամփը** խոստովանել է, որ Իրանի դեմ ռազմական գործողությունների որոշակի փուլում Անկարան նույնիսկ պատրաստ էր ավելի ակտիվ դեր ստանձնել Իրանին աջակցելու հարցում՝ Իսրայելին «պատժելու» նպատակով:

Թուրքիային ավելի շատ «ցավ պատճառելու» ձգտումից ելնելով՝ Իսրայելի վարչապետը գտավ մի թեմա, որը հարվածում է Թուրքիայի միջազգային հեղինակությանը, դիվանագիտական դիրքերին, ինչպես նաեւ իրավական եւ տարածքային հնարավոր հետեւանքների տեսանկյունից առավել զգայուն հարցերից մեկին՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը:

Իսրայելում լավատեղյակ են թուրքական կողմի կտրուկ, նյարդային եւ համակարգված արձագանքներին յուրաքանչյուր մոր ճանաչման դեպքում: Այդ թեման շարունակում է մնալ

Անկարայի արտաքին քաղաքականության ամենախոցելի կետերից մեկը:

Հարցի կարեւորությունը թուրքական քաղաքական էլիտայի համար երեւում է նաեւ նրանից, թե որքան պետական միջոցներ են ուղղվում դրա դեմ պայքարին: Թուրքիան տարեկան միլիոնավոր դոլարներ է ծախսում աշխարհով մեկ, հատկապես ԱՄՆ-ում, լոբիստական ընկերություններ վարձելու, ժխտողական թեզեր տարածելու, գրքեր հրատարակելու եւ արխիվային նյութերի սեփական մեկնաբանությունը առաջ մղելու համար:

Բնականաբար, Անկարայի պատասխանը չուշացավ: Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունն արձագանքեց Իսրայելի կառավարության կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող որոշման ընդունմանը՝ այն որակելով որպես «չարամիտ քայլ»: Հայտարարության մեջ նշվում է. «Ամբողջ աշխարհի աչքի առաջ պաղեստինցի ժողովրդի նկատմամբ համակարգված բռնություններ իրականացնող եւ Միջազգային արդարադատության դատարանում Գազայի բնակիչների նկատմամբ ցեղասպանություն իրականացնելու մեղադրանքով քննվող Իսրայելի կառավարությունը 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ ընդունած քաղաքական որոշմամբ նպատակ ունի քողարկել սեփական հանցագործությունները»:

Չնայած Թուրքիայի եւ Իսրայելի միջեւ առկա բարձր մակարդակի քաղաքական լարվածությանը՝ հակամարտող կողմերն ունեն երկու մտերիմ դաշնակից, որոնք, լարվածության վերահսկողությունից դուրս գալու դեպքում, հավանաբար կփորձեն միջնորդի դեր ստանձնել Անկարայի եւ Թել Ավիվի միջեւ: Իսրայելի երկու դաշնակիցներն են՝ **Իլիամ Ալիեւը** եւ **Դոնալդ Թրամփը**:

Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ Թել Ավիվը սերտ ռազմավարական հարաբերություններ ունի Ադրբեյջանի հետ: Այդ պատճառով էլ որոշման մասին լուրը տարածվելուց անմիջապես հետո Ադրբեյջանի արտաքին գործերի նախարարությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ կոչ

անելով Թել Ավիվին վերանայել այդ որոշումը:

Ադրբեյջանի ԱԳՆ-ն իր հայտարարության մեջ նշել է, որ 1915 թվականի իրադարձություններին վերաբերող պատմական փաստերը «խեղաթյուրված են», որ այս զգայուն պատմական հարցը քաղաքական որոշումների գործիք դարձնելն անընդունելի է:

Ադրբեյջանը, որն այս հարցում մշտապես գործել է իր ռազմավարական գործընկեր Թուրքիայի հետ նույն դիրքերից, Իսրայելի այս քայլը ոչ միայն չի գնահատում որպես խաղաղությանն ուղղված նախաձեռնություն, այլեւ համոզմունք է հայտնում, որ նման գործողությունները Հարավային Կովկասում կայուն խաղաղության հաստատման ճանապարհին մոր խոչընդոտներ կստեղծեն:

Թուրքիայի եւ Իսրայելի մյուս դաշնակիցը՝ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը, իր պաշտոնավարման ընթացքում եւ ապրիլի 24-ի ամենամյա ուղերձներում Հայոց ցեղասպանությունը մշտապես բնութագրել է որպես «Մեծ եղեռն»՝ խուսափելով «ցեղասպանություն» եզրույթի օգտագործումից:

Մինչ Իսրայելի կառավարության այս նախաձեռնությունը, Թրամփի նման մոտեցումը հիմնականում պայմանավորված էր Թուրքիայի հետ գործընկերային հարաբերությունները պահպանելու քաղաքականությամբ: Կարծում ենք, որ Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը դժվար թե էական ազդեցություն ունենա Թրամփի դիրքորոշման վրա եւ նրան դրդի այս հարցում կտրուկ քայլերի:

Իսկ մենք՝ հայերս, անտեսելով Իսրայելի այս քայլի հուզական քաղաքական եւ հասկանալով դրա պոզիտիվ հիմքերը, պետք է սթափ գնահատենք Հայաստանի եւ Իսրայելի շահերի ժամանակավոր համընկնման կարեւորությունը: Չէ՞ որ, եթե չես կարողանում ազդեցություն ունենալ աշխարհաքաղաքական գործընթացների վրա, ապա պետք է կարողանաս հետեւել իրադարձությունների զարգացման արդյունքում ձեւավորվող նպաստավոր իրավիճակներին եւ օգտվել դրանց ընձեռած հնարավորություններից:

⇒ **1** Հունգարիայում անցկացված մեր ընտրությունների արդյունքը Ուրսուլայի համար անձրեւից փախչելու փոխարեն կարկուտի բռնվելու նման մի բան եղավ. ձայների մեծամասնությամբ ընտրվեց երիտասարդ, բայց արդեն ժողովրդի սիրելին դարձած **Պետր Մազյարը**, որի առաջին ելույթը ԵՄ համաժողովում եղավ շատ ավելի խիստ, շատ ավելի կոնկրետ փաստերով առատ դատապարտման խոսք՝ ուղղված ԵՄ հանձնաժողովի «թագուհուն», որի աչքերին նայելով՝ նա պարզապես ասաց. «Քո տեղը ոչ թե այդ աթոռն է, այլ՝ դատարանը»:

ԵՄ-ը մեղաակից՝ ընտրախախտումներին

Դա եղավ ազդանշան՝ ԵՄ 28 երկրներում հետաքննություններ սկսելու Ուրսուլայի եւ նրա գլխավորած հանձնաժողովի զեկուցված ու չզեկուցված ծախսերի, նվիրատվությունների, կաշառքների մասին փաստաթղթեր գործընթաց, որին օրերս արձագանքեց նաեւ մարդու իրավունքների հեղինակավոր պաշտպան, հարգված իրավաբան Հայաստանում գործող իշխանության անօրինական գործողությունները, Հայ եկեղեցու դեմ հալածանքները խստորեն դատապարտող **Ռոբերտ Ամստերդամը**,

որը շատ մոտիկից էր հետեւում նախընտրական, ընտրական եւ հետընտրական զարգացումներին: ԵՄ հանձնաժողովի ու նրա նախագահին ուղղվելով իր խոսքը՝ նա հաստատեց, որ ԵՄ-ը հովանավորում եւ պաշտպանում է Նիկոլ Փաշինյանի անօրինական բոլոր գործողությունները, ընդհուպ վերջին ընտրություններում կատարվածները:

Արդարեւ, ճիշտ ժամանակն է Հայաստանում ստեղծելու ֆինանսագետներից կազմված արտախորհրդարանական մի մարմին, որը, եվրո-

պական համապատասխան մարմինների հետաքննությանը համահունչ՝ կկարողանա բացահայտել ընտրությունների նախօրեին Ն. Փաշինյանի ու նրա կառավարության ԵՄ-ից ստացած ֆինանսական «օգնությունների» նպատակը, քանակը, ծախսման եղանակը, շահառուներին եւ, վերջապես, ողջ պատկերը արտաքին միջամտության:

Դա օգտակար կլինի ոչ միայն մեր ժողովրդին, այլեւ ԵՄ անդամ երկրների ժողովուրդներին, որոնց կողոպտել են Ուրսուլան եւ ընկերները:

⇒1 Խմբագրականում համառոտ անդրադարձ կա թուրքիայի՝ որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդի ցեղասպանություն կատարելու փաստի ժխտմանը, որ մերժում է հայերին ոչնչացնելու պետության նպատակադրված, համակարգված բնույթը, նվազեցնում է զոհերի թիվը՝ 300 000-500 000 համարելով: tachles-ը հիշատակում է, թե 2025-ին մի հարցազրույցի ժամանակ **Նեթանյահուն** եղավ առաջին վարչապետը, որ ճանաչեց Հայոց ցեղասպանությունը:

Իսրայելի խորհրդարանում Քնեսետում տարբեր տարիների ճանաչման առաջարկներ եղել են, սակայն պաշտոնական տեսակետ չի ձևակերպվել: Սույն շաբաթահանդեսը Իսրայելի հապաղումը մեկնաբանում է թուրքիայի հետ հարաբերությունները պահպանելու տեսակետից: Սակայն վերջին տարիներին դրանք վատթարացել են՝ Պաղեստինի հանդեպ դիրքորոշման պատճառով, իսկ նախագահ **Էրդողանը** 2023-ին Իսրայելին է մեղադրել Գազայում ցեղասպանություն իրագործելու համար: tachles-ը Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկու երկիր է նշում՝ ԱՄՆ Կոնգրեսը 2019-ին է ընդունել, ԳՂՀ Բունդեսբադը 2016-ին, որ ժամանակին մեծապես ծանրաբեռնեց գերմանաթուրքական հարաբերությունները, գրում է հրեական լրատվական հանդեսը: («Ազգ» այդ թեման մանրամասն լուսաբանել է: Տե՛ս 2015-16-ի արխիվը- **ԱՃ.Յ.**):

«Իսրայելն այսօր» (israel heute) կայքը հունիսի 28-ին վերնագրում է՝ «Էրդողանը թուրքիային ուղղորդում է Իսրայելի հետ բացահայտ առճակատման»: «Մինչ Անկարան ուժեղացնում է իր հակասիոնիստական հռետորաբանությունը, Երուսաղեմը դիվանագիտորեն սուր հակադարձում, պատմական քայլ է անում՝ ճանաչում է Հայոց ցեղասպանությունը»:

Իսրայելաբնակ մեկնաբան Ռայան Ջոնսը (Ryan Jones) մեջբերում է Էրդողանի հայտարարությունը՝ «Սիոնիզմը կոչվող ցեղասպանական, օկուպացիոն, էքսպանսիոնիստական գաղափարախոսությունը սպառնում է ո՛չ միայն ինձ, ո՛չ միայն մեր կուսակցությանը, ո՛չ միայն մեր դաշինքին, այլ՝ բոլորին: Մենք պայքարում ենք սիոնիզմի դեմ, չենք պայքարում մեզ համար, անձնական պատճառներով, այլ՝ սեփական գոյատևման, մեր ազգի գոյատևման համար»: Մեկնաբան Ջոնսը գրում է՝ «Այս բառերի ընտրությունը Իսրայելի քաղաքականության սովորական քննադատություն չէր: Քաղաքակրթական հռետորաբանություն էր, որ

Պայքար Բնեսետում Հայոց ցեղասպանության առաջիկա օրինագծի դեմ

սիոնիզմը՝ հրեա ժողովրդի ազգային շարժումը ներկայացնում է որպես գոյաբանական թշնամի: Տոնը նվազ դիվանագիտական էր, ավելի՝ գաղափարական, ավելի նման թեհրանի բառապաշարին, քան ՆԱՏՕ-ի անդամ պետության», գրում է «Իսրայելն այսօր»-ի քաղաքական մեկնաբանը՝ ծանուցելով Իսրայելի ԱԳՆ-ի կտրուկ արձագանքի մասին» Էրդողանը դիկտատոր է, հարձակվում է Մերձավոր Արևելքի միակ ժողովրդավարության վրա: Էրդողանը կոչնչանա, Իսրայելը հավերժ է»:



Իսրայելի ԱԳ նախարար Գիդեոն Սաարը Հայոց ցեղասպանության ճանաչման որոշումը Քնեսետում ներկայացնելիս: 30.06.2026 թվական:



Գերմանիայում հրատարակվող «Յուդիշե ալգեմայնեն», որ տարբեր տարիների՝ հատկապես ապրիլի 24-ին հողված էր հրապարակում Հայոց ցեղասպանության վերաբերյալ, ճանաչման մասին Սաարի առաջարկին անդրադարձավ հունիսի 26-ին՝ նշելով, թե 32 երկիր արդեն պաշտոնապես ճանաչել է Հայոց ցեղասպանությունը, ինչպես նաեւ ծանուցեց, թե այսօր աշխարհում հայկական ծագմամբ 11 միլիոն մարդ է հաշվվում: Հունիսի 29-ին նույն լրատվամիջոցը իսրայելաբնակ մեկնաբան **Սաբինե Բրանդեսի** հեղինակած ծավալուն անդրադարձով է լուսաբանում Երուսաղեմի միաձայն որոշումը՝ շեշտելով արտգործնախարար Սաարի խոսքի՝ «բարոյական պարտք» ձևակերպումը: Հեղինակն անդրադառնում է թուրքիայի եւ նրա կրտսեր եղբոր՝ Ադրեքանի բուռն հակադեցությանը: «Կառավարության միաձայն որոշումը կուրսի նշանակալի փոփոխություն է ներկայացնում, որ ձևակերպված է որպես պատմական եւ բարոյական պարտավորություն, միջնորդ թուրքիան այն դիտարկում է որպես քաղաքական դրդապատճառներով պայմանա-

վորված քայլ, որը հավանաբար առավել կսրի երկու երկրների միջեւ՝ արդեն իսկ չափազանց լարված հարաբերությունները», գրում է «Յուդիշե ալգեմայնեի» մեկնաբանը:

«Օսմանյան կայսրությունը վաղուց չկա, իսկ Իսրայելն ու նրա ռճրագործությունը Երուսաղեմում են»

Սա գերմանական լրահոսում Իսրայելի ճանաչման առթիվ ֆբ-ում ծավալված մի քննարկման ժամանակ թուրք օգտատիրոջ գրառումից է: Կայսրությունն իհարկե չկա, բայց իրավահաջորդ թուրքիան կա, որ զղջում բառը չի ճանաչում, իսկ ուրացման դաշինքը կռում է Ադրեքանի հետ՝ հայկական սեպին հարվածելով: «Հայաստանը սեպ է» թուրքիայի՝ տարիներ ի վեր կրկնած արտահայտությունը կարծես էլ չենք լսում, բայց գործողությունները, մասնավոր վերջին երկու տարիներին խաղաղության եւ կայունության ձեռնարկման տակ ինչպես է փափուկ ուժի միջոցով՝ մեր ունկը շոյելով հարվածում այդ սեպին... զգում ենք, ապրում ենք ամեն օր: Իսրայելի ճանաչումը

կտրում է թուրքիայի եւ Ադրեքանի՝ սեպը հեռացնելու հարվածի ուժը: Թուրքանը միավորելու նպատակը չի բխում հրեական շահերից, եւ ժամանակը՝ timing-ն ընտրված է մի պահի, երբ Իրանի դեմ պատերազմի գայթակությունը չի նվազեցնում թուրքական աշխարհը խառնելու, Թուրքանը կամրջելու ծրագրի կասեցումը: Եւ սա բխում է հայկական շահերից:

Բաբուն Բնեսեթի ղազաճաճությունի վրա ձևում է՝ Ադրեքանի հրեական համայնքի միջոցով

Գերմանիայում հրատարակվող nex24.news թուրքական կայքը հունիսի 29-ին վերնագրում է՝ «Ադրեքանը դատապարտում է ցեղասպանությունը ճանաչելու Իսրայելի որոշումը»: Գերմանաթուրքական կայքը հրապարակման մեջ խոշորացույցի տակ է առնում Բաբուն Երուսաղեմի հարաբերությունները, եւ տպավորություն է ստեղծում, թե Հայոց ցեղասպանության ճանաչման փաստը վտանգում է Ադրեքանի հետ Իսրայելի հարաբերությունն առավել: «Թեպետ Իսրայելը 2020-ին ԼՂ պատերազմի ժամանակ Ադրեքանին առաջադեմ զենքի տրամադրմամբ վճռորոշ աջակցություն հատկացրեց, Բաբուն այժմ իր մտերիմ դաշնակցի դեմ կտրուկ դատապարտմամբ է արտահայտվում՝ մեղադրելով նրան «պատմական ճշմարտության խեղաթյուրման» մեջ՝ «խոր մտահոգություն հայտնելով»:

Նախկինում երախտագիտությունից դրդված Բաբուն ձեռնպահ էր մնում Իսրայելին հրապարակվ քննադատելուց», կարծիք է հայտնում գերմանաթուրքական կայքը եւ ծանուցում Ադրեքանի ԱԳՆ-ի ձեռնարկման մասին՝ «նման միջոցառումները չեն նպաստում հաշտեցմանն ու փո-

խըմբռնմանը, այլ՝ խորացնում են առկա տարաձայնությունները, խաթարում տարածաշրջանում երկարատեւ խաղաղության, կայունության հասնելու ջանքերը: Բաբուն կոչ է արել վերանայել որոշումը», գրում է nex24.news-ը հավելելով՝ «այս կտրուկ արձագանքը հետեւել է Իսրայելի կառավարության միաձայն ճանաչմանը, սակայն դրանից առաջ Գիդեոն Սաարը ադրեքանցի իր գործընկերոջ հետ հանդիպել եւ փորձել է հանդարտեցնել նրան: nex24.news-ը ծավալուն անդրադարձում գրում է, թե Ադրեքանի հրեական համայնքը նույնպես անմիջապես արձագանքել է եւ դատապարտել Իսրայելի քայլը: Ըստ այս աղբյուրի, հունիսի 29-ին **Ռաբբի Չամիր Իսայեւը** Իսրայելի ճանաչումը որակել է «սխալ, միակողմանի, քաղաքական դրդապատճառով» եւ հույս է հայտնել, որ Քնեսեթը կարգելափակի բանաձեւը: Ադրեքանի սեֆարդական հրեական համայնքի ղեկավար, Բաբլի հրեական դպրոցի տնօրեն եւ գլխավոր ռաբբի Չամիր Իսայեւ (Rabbi Zamir Isayev) X-ի էջում այս թեմայով որեւէ գրառում չկա: Նույն «անտարբերությունն» է թեմայի նկատմամբ Բեռլինում Ադրեքանի դեսպան Ադաբի X-ի էջում: Սակայն շարունակենք nex24.news-ի մեկնաբանի ծանուցումը՝ «այսպիսով՝ մեկ քաղաքական գործչի՝ Սաարի սկզբնական պահանջն այժմ դարձել է կառավարության պաշտոնական քաղաքականություն, իսկ օրենքը վերջնական ուժի մեջ մտնելու համար պետք է ընդունվի Քնեսետում, քայլ, որը Բաբուն, Ադրեքանի հրեական համայնքը փորձում են կանխել՝ իսրայելցի պատգամավորների վրա ճնշում գործադրելով»:

«Ջերուսալեմ փոստը» հունիսի 1-ին գրում է, թե Ադրեքանի հրեական աշքենազի համայնքի գլխավոր ռաբբի **Շնեուր Սեգալը** Քնեսեթի «Լիկուդ» խմբակցության ղեկավար **Օֆիր Կացին** նամակ է հղել՝ կոչ անելով վերանայել կառավարության Հայոց ցեղասպանության ճանաչումից բխող որոշումը:

ԱՄՆ, ԵՄ երկրների սփյուռքահայ կառույցները ողջունել են Իսրայելի կառավարության ճանաչումը, գոհունակություն է հայտնել նաեւ սաղիմահայությունը:

ՀՀ ԱԳՆ լուռ է: Բայց սրա մասին «Ազգի» առաջիկա համարում:

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Աննա Մայիլյանի երգչական արվեստի «ձեռագրակերպը» վաղուց ճանաչելի է հայ մշակութային կյանքում: Դրա արտահայտություններից մեկն էլ «Նվիրում» խորագրով համերգն էր՝ ի հիշատակ չորս անձանց, որ լուրջ դերակատարություն են ունեցել հայկական երաժշտարվեստի, նաեւ մեր հոգեւոր-արվեստային ոլորտներում: Համերգի ընթացքում երաժշտագետ **Նարինե Ավետիսյանը** մեկընդմեջ խոսեց դիրիժոր, հայաստանյան բազմաթիվ փառատոների եւ մրցույթների նախաձեռնող եւ ղեկավար մանտրո **Զավեն Վարդանյանի**, երաժշտության մեծ գիտակ, ժամանակակից երաժշտական երկերի խորամիտ մեկնաբան **Իրինա Տիգրանյանի**, հայ հոգեւոր արժեքների անխոնջ տարածող **Տեր Կյուրեղ Տալանի** եւ բարեգործ, արվեստի աշխարհի մարդկանց աջակից **Ռուբեն Բաբայանի** վաստակի եւ ներդրումների մասին: Նրանց ի նվիրում երգեցին Աննա Մայիլյանը եւ իր դպրոցն անցած երեք երգչուհիները:

Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստ, երգչուհի Աննա Մայիլյանի եւ Հնագույն երաժշտության «Տաղարան» համույթի ստեղծագործական համագործակցության հերթական արարը կայացավ Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը: Հոգեւոր եւ ժողովրդական երգերը, դասական, արդի հայ եւ արեւմտյան կոմպոզիտորների ստեղծագործու-

Մեկ գումարած երեք ձայն՝ «Նվիրում» համերգին



թյունները հավասարապես են «տրվում» Աննա Մայիլյանի ձայնին: Բայց միայն երգչական հմտությունը չէ՝ նրա բեմական արվեստի գրավչության գրավականը. համեստ, կիրթ, խորագետ լինելով կյանքում՝ նա իսկական արտիստ է բեմին: Անգամ փոքրածավալ ստեղծագործություններ կատարելիս՝ նրա ներկայացրած կերպարները համոզիչ են, նրա վերափոխումները՝ իր վարպետության վկայական:

Հենց նման զարմանահրաշ վերափոխումների վկան եղավ երեւոյան հանդիսականը՝ ներկա լինելով «Նվիրում» խորագրված համերգին: Նրան ուսանած երեք երգչուհիներ են հաջորդաբար կամ դուետով հանդես եկան համերգին՝ «Տաղարանի» կամ դաշնամուրային նվագակցությամբ: Դեռատի երգչուհիները՝ **Լիանա Սիմոնյանը**, **Մարգարիտա Օբրոյանը** եւ **Դոնարա Ադամյանը**, անբռնազբոս էին բե-



մին, բարդ ստեղծագործությունների կատարմանը՝ անշփոթ. գեղեցիկ ձայներ է մշակել Աննա Մայիլյանը՝ դասավանդելով Կոմիտասի անվ. կոմերսիալատորիայում: Նրանք նույն հաջողությամբ հաղթահարեցին բազմաբնույթ եւ բավական բարդ ծրագրի դժվարությունը՝ կատարելով բարոկ, ռոմանտիկ շրջանների գեղեցկահունչ գործեր (ընտրված էին հատվածներ Հենրի Փոլսոնի «Դիդոնա եւ Էնեոս» օպերայից, Յոհան Սեբաստիան

Բախի 51 կանտատից, Ջիովաննի Պերգոլեզիի «Ստաբաթ Մատերից»), ապա սահունորեն անցում կատարելով դեպի արդի կոմպոզիտորների գործեր, դրանց թվում՝ Կոնստանտին Պետրոսյանի «Տիրամայրը», Միքայել Կոկոթեի երկու երգերը, Ալեքսանդր Դոլուխանյանի աննման «Ծիծեռնակը»՝ «Տաղարանի» գեղ. ղեկավար եւ դիրիժոր **Սեդրակ Երկանյանի** ճաշակավոր մշակմամբ: Նվագակցում էին դաշնակահարներ **Էլեն Կիրակոսյանը** եւ **Լուսինե Կարապետյանը**, սաքսոֆոնահար Իրինա Գասպարյանը, կլառնետահար Վյաչեսլավ Մանուչարյանը:

Առանձին եւ շեշտադրված պիտի խոսեմ Աննա Մայիլյանի երկու բեմելույթների մասին՝ Ավետ Տերտերյան կատարելիս: Երկուսն էլ կենդանի պատմություններ էին, մինի-ներկայացումներ՝ զգացմունքների ցայտունությամբ, ձայնի միջոցով կերպավորմամբ, բանաստեղծական խոսքը ներկայացնելու հստակությամբ եւ հնչմամբ, վոկալիզի արտահայտչականությամբ, երբ զուտ ձայնն էլ պատմում է կոմպոզիտորի ապրած ժամանակների եւ գոհաբանության մասին: Իսկ Ավետ Տերտերյանի «Վոկալիզը»՝ ձայնի, սաքսոֆոնի եւ դաշնամուրի համար, իսկական գոհաբանություն էր՝ քնարական կառույցով, ստեղծարար կյանքի բավականության զգացումով: Տերտերյանի սիմֆոնիաների տրամաբանու-

թյանն ու մտահեգուններին ծանոթ լինելով՝ ինձ համար մի փոքր տարօրինակ էր նման գոհաբանությունը, որ անխոսք դիֆերամբային հնչում ուներ, ինչը խորքայնորեն ներկայացրեց երգչուհին՝ սաքսոֆոնահար Իրինա Գասպարյանի եւ դաշնակարուհի Էլեն Կիրակոսյանի նվագակցությամբ: Ունկնդրիս զգացողությունը եւ անձնական կարծիքը հաստատելու համար համերգից հետո հարցում արեցի երգչուհուն՝ արդյոք ճիշտ եմ հասկացել այդ երաժշտությունը, դա խաղաղ եւ ստեղծարար կյանքով ապրող երկրիս վաղեմի տարիների մարդկային ապրումների, երազների արտահայտությունը չէ: Նաեւ հասում կնոջական հոգեզեղում, որ այդպիսին էր հատկապես Ա. Մայիլյանի երգեցողության շնորհիվ: Պարզվեց՝ զգացողությունս ճիշտ է, տերտերյանական ստեղծագործության մի այլ կողմի հայտնությունը հանդիսականի համար:

Բայց դրանով չավարտվեց մեր ժամանակների մեծագույն կոմպոզիտորի ստեղծագործության ներկայացումը: Մի երգ՝ «Կանաչաշյա կնոջը», զուտ նվիրում չէր, այլ մի քիչ տարօրինակ պատմություն՝ դրամատիկ հնչմամբ սկսվող, միջնամասի հուզապատումով, բանաստեղծական խոսքի ասերգով եւ անսպասելի սարկաստիկ քրքիջով ավարտվող, որ երկար մտածելու տեղիք է տալիս ունկնդրին: Մի քանի րոպե տետղությամբ ներկայացում, որի դերակատարը Աննա Մայիլյանն էր՝ ի հիացում իր հանդիսականի եւ ի տես իր աշակերտների:

ՍՏԵՓԱՆ ՓԵՇԴԻՍԱԼՅԻ

Հաղորդակցան կադուտիների ռազմագեհ, ՄԾԾ

«Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթերթից ստորեւ թարգմանաբար ներկայացվող (որոշ հապավումներով) հոդվածի հեղինակը առաջին սերնդի ամերիկահայ է, որն ապրում է Սան Ստեֆանոյի ծովածոցային հատվածում:

Քրիստոնեական աշխարհի հետ մերձեցման եզրեր գտնելու նպատակով վերջերս Ջորջ Դիքի (George Deek) նշանակումը որպես Իսրայելի հատուկ բանազնաց, երկրի արտգործնախարարության կողմից բնութագրվեց որպես «հմուտ քայլ»: Փորձառու դիվանագետ, 1948-ի պատերազմի վտարանդիների զավակ Դիքը քրիստոնյա արաբ է եւ ըստ փաստաթղթերի նրա նշանակումը առաջին հայացքից «անվճար ընտրություն» կարելի է համարել: Սակայն հարցի մեջ մի փոքր խորանալու դեպքում կարելի է նշմարել կեղծ բարեպաշտություն այն առումով, որ Իսրայելի կառավարությունը արաբ քրիստոնյայի նշանակումով փորձում է ստեղծել բազմակարծության ներդաշնակություն, մինչդեռ այդ ներդաշնակությունը բացակա է ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա արտաքին քաղաքականության մեջ:

Մինչ միջազգային բեմահարթակում Դիքին ներկայացնում են որպես հաջողակ դիվանագետի, Երուսաղեմում ապրող Պաղեստինի քրիստոնյա հա-

Քրիստոնյաներին մեռնապալու Իսրայելի նոր կեղծավոր քայլը



մայնքը գոյակեցության ճգնաժամ է ապրում: Արեւմտյան ափում ռազմական օկուպացիայի ճնշման եւ արեւելյան Երուսաղեմում ու բուն Իսրայելում կրոնական անհանդուրժողականության վտանգի առկայության պայմաններում այդ քրիստոնյա համայնքը հետզհետե նոսրանում է: Բեթղեհեմի քրիստոնեական վայրերում վերաբնակեցման ծրագրերի շարունակական բնույթի ֆոնին հատուկ բանագցի նշանակումը բոլորովին էլ դիվանագիտական ճիշտ քայլ չէ: Այն պարզապես փորձ է շեղելու ուշադրությունը դեպի մի այլ բնագավառ: Նրա նշանակման հեզմանքն իր զագաթնակետին է հասնում հենց Երուսաղեմի

պատերի ներսում: Մինչ նրա պարտականությունն է Իսրայելը ներկայացնել որպես խաղաղ պատսպարան քրիստոնյաների համար, այդ քաղաքի ավելի քան 1600 տարվա վաղեմություն ունեցող հայկական թաղամասի բնակիչները ապրում են հողերը հափշտակող «գիշատիչների» սպառնալիքների ներքո: Նրանք 24-ժամյա վերահսկողություն են սահմանել պաշտպանելու համար իրենց հողատարածքները այսպես կոչված «բարենորոգման» վիճելի գործարքներից: Սա սովորական անշարժ գույքի վիճաբանություն չէ, այլ պետական աջակցությամբ համակարգված փորձ՝ վերացնելու Երուսաղեմի քրիստոնեական դիմագիծը:

Հայկական համայնքի համար հատկապես Դիքի նշանակումը «դառը դեղահաբ է, որը հնարավոր չէ կուլ տալ»՝ հաշվի առնելով անցյալի փորձառությունները: Նաեւ ներկայի: Որպես Ադրբեջանում Իսրայելի դեսպան Դիքը մասնակցել է հայերին պատուհասած բռնություններին, իսրայելական զինատեսակներ մատակարարելով Բաքվին, որոնք վճռորոշ դեր կատարեցին պատերազմում: Դիքը սովորական անձնավորություն չէր այնտեղ, այլ սառնասիրտ անտարբերությամբ հետեւող դիվանագետ, որ ականատես էր լինում, թե ինչպես են Արցախը հայաթափելուց հետո ադրբեջանցիները հողին հավասարեցնում հայկական եկեղեցիներն ու սրբավայրերը, որպեսզի վերացվեն հայկական պատմական հետքերը: Նա նույնիսկ անհրաժեշտ չհամարեց թեկուզ դիվանագիտական բառապաշարով իր մտահոգությունը հայտնել պատահածի վերաբերյալ: Այնպես որ, քրիստոնյա աշխարհի հետ նրա պարտավորությունները զուտ գործարք են: Իսկ նշանակումը այդ պաշտոնում՝ ցինիկ քայլ, որը ոչ թե կապաշտպանի քրիստոնյա համայնքը, այլ կշարունակի իր անտարբեր կեցվածքը եւ ավարտին կհասցնի ընդդեմ հայերի գործադրված գործողությունները:

Անգլ. բնագրից թարգմանեց՝
ՏԵՄԵՐ ԾՈՒՆԵՅՏԻՆԷ
(The Arm. Mirror-Spectator)

ԱՐԾՎԻ ԲԱՆԶԻՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ-ԲԵՌԼԻՆ - Ալիսիա Խաչիկյանը (ծնվ. Իտալիա, 1988 թ.) բեռլինացի արվեստագետ-հետազոտող է, որի ստեղծագործությունը զարգանում է վավերագրական, կերպարվեստային եւ ազգագրական մոտեցումների հատման կետում: Պատկերների, տեքստերի, կոլաժների եւ արխիվային նյութերի միջոցով նա հարցականի տակ է դնում սահմանները, հիշողությունը եւ մարմինը՝ որպես ապրած փորձառության տարածք՝ հաճախ ելակետ ընդունելով սեփական կենսագրությունը: Քաղաքական գիտությունների բակալավրի աստիճան է ստացել Տրիեստի համալսարանում եւ սոցիալ-մշակութային մարդաբանության մագիստրոսի աստիճան՝ Վիեննայի համալսարանում: Հետագայում Գերմանիայում ստացել է լուսանկարչի մասնագիտություն: Իր արվեստագիտական գործունեությանը զուգահեռ աշխատում է որպես անկախ լուսանկարիչ եւ վարում է պատկերների վրա հիմնված աշխատարաններ՝ նվիրված արվեստագետների գործերին եւ համագործակցային ուսուցմանը:

Արվեստագետի մասին մանրամասն կարելի է տեղեկանալ՝ այցելելով նրա կայքը՝ <https://alicjakhatchikian.com/>

«Սիրելի՛ Ալիսիա, անցած ապրիլին մեծ հաճությամբ դիտեցի ձեր լուսանկարները Երեւանում բացված «Ինչպիսի՞ն է ժամանակակից հայը» ցուցահանդեսում: Ինչո՞ւ ընտրեցիք լուսանկարչությունը որպես ինքնարտահայտման միջոց:

– Իմ ընտրությունը սկզբում պարն ու երաժշտությունն էին: Շատ փոքր տարիքից զբաղվել եմ բալետով, այնուհետեւ անցել ժամանակակից եւ արդի պարին: Հասակ առնելով 1990-ականներին՝ տեսախցիկներն ինչ-որ կերպ միշտ ներկա էին իմ կյանքում. սկսեցի օգտագործել մայրիկիս տեսախցիկը, միանգամայն օգտագործման եւ ժառանգություն մնացած այլ անալոգային ֆոտոխցիկներ, հաճախ՝ ժամկետանց ժապավեններով: Ինձ ավելի շատ հետաքրքրում էր ոչ թե արդյունքը, այլ հենց գործընթացը: Ինձ, որպես բավական ամաչկոտ մարդու, տեսախցիկներն օգնում էին ներկա լինել՝ առանց ուշադրության կենտրոնում հայտնվելու: Միայն տարիներ անց, երբ մագիստրոսական թեզիս համար դաշտային հետազոտություն էի իրականացնում, սկսեցի փաստագրել փերֆորմանս կատարող արվեստագետների աշխատանքը եւ աստիճանաբար ձեւավորեցի իմ սեփական ստեղծագործական պրակտիկան:

– Ի՞նչ թեմաներ են ձեզ ամենից շատ գրավում՝ մարդիկ, քաղաքային տարածքներ, հիշողություն, մարմին, ինքնություն, թե՞ ճանապարհորդություն...

– Ինձ գրավում են պատմությունները եւ այն, թե ինչպես են համատեքստը, ժամանակը եւ ապրած փորձառությունը ձեւավորում դրանց իմաստավորումը: Ես նաեւ հավատարիմ եմ «դանդաղ լուսանկարչության»՝ գաղափարին՝ որպես դիտելու եւ ստեղծագործելու ձեւի: Միջավայրերը կարող են լինել եւ իրական տարածքներ, եւ՝ երեւակայական լանդշաֆտներ: Օրինակ՝ հայ Սփյուռքի պատմություններում հաճախ հիշատակվում են վայրեր, որոնք մենք՝ թուրքերի սերունդը, չենք տեսել, միայն լսել ենք դրանց մասին: Կարծում եմ՝ կարելի է ունկնդիր լինել այդ արձագանքներին՝ առանց դրանք ժամանակավրեպ կերպով մեկնաբանելու:

– Ձեզ համար լուսանկարչությունը փաստագրում է իրականությունը, թե՞ ստեղծում է նոր իրականություն:

² ÉÇëÇ ³ Ê ³ ãÇ ÎÛ ³ Ý.
àõÝ Ì Ý¹ Çñ ÉÇÝ»Éá í ³ ñÓ ³ . ³ ÝùÝ»ñÇÝ



Ալիսիա Խաչիկյան

– Ես չգիտեմ, թե ինչ է իրականությունը: Կարծում եմ՝ դա հայացքի, մտադրության եւ ընտրողականության հարց է: Մի անգամ ինչ-որ մեկն իմ լուսանկարչական աշխատանքը բնութագրեց որպես «վավերագրական կերպարվեստ», եւ ինձ թվում է, որ այդ սահմանումը գտնվում է դիտարկման եւ մեկնաբանության միջեւ: Ինձ համար լուսանկարչությունը հարաբերական գործընթաց է, այլ ոչ թե իրականության պարզ ներկայացում: Ես պատկերները դիտում եմ որպես վիճարկվող տարածքներ, անկայուն օբյեկտներ, որոնք իրենց շրջանակներից դուրս կրում են մասնակի ճշմարտություններ եւ բազմաշերտ պատմություններ:

– Հայաստանում աշխատելիս ի՞նչը ձեզ ամենից շատ հետաքրքրեց:

– Առաջին անգամ Հայաստան այցելեցի 2025 թվականին: Չգիտեի՝ ինչ սպասել: Իմ «Տունդարձ» շարքի ստեղծումից ի վեր ինձ գրավել են սահմանափակ ջրային տարածքները, ուստի ճանապարհվեցի դեպի հարավ՝ հանդիպելու Արաքս գետին: Տարածքը խիստ ռազմականացված է, եւ գետի ջրերին հասանելիությունը սահմանափակ էր: Սահմանները նաեւ ներթափանցված են Կապանի եւ Գյումրու լանդշաֆտների մեջ: Երեւանում հանդիպեցի սփյուռքահայերի, տեղացի արվեստագետների եւ մտավորականների: Մենք խոսում էինք այսպես կոչված հավաքական հիշողության բազմազանության մասին: Այդ հանդիպումները կենսական նշանակություն ունեցան ինձ համար, ինչպես նաեւ Օիծեռնակաբերդ կատարած այցը՝ Բեռլինում գործող «Ռասիզմի, ազգայնականության եւ խտրականության դեմ ակտիվիստական միություն» կազմակերպության այլ անդամների հետ, որը նպաստում է Անատոլիայի համայնքների եւ դրանցից դուրս գտնվող խմբերի միջեւ երկխոսության կայացմանը:

– Ես ուսումնասիրել եմ ձեր ընտանիքի պատմությունը՝ Աֆրիկայի հայերի վերաբերյալ իմ հետազոտության շրջանակում: Խաչիկյանների ընտանիքը մի շարք նշանավոր ներկայացուցիչներ է տվել Սուդանի հայկական համայնքին: Պատմե՛ք, խնդրե՛մ, ձեր ընտանիքի ողիսականի մասին:

– Ինչպես շատ սփյուռքահայ ընտա-

նիքների դեպքում, մեր պատմությունը նշանավորվել է բազմակի տեղահանություններով եւ սերունդների միջեւ խզումներով: Հայրս ծնվել է մեծացել է Խարթումում, 1967 թվականին տեղափոխվել Գորիցիա (Իտալիա): Տատիկս օտար էր (այս բառն Ալիսիան ասաց հայերեն - Ա. Բ.) եւ դժվարանում էր իրեն ընդունված զգալ հայկական համայնքում: Պապիկս՝ Ազատը, Ձենոբ Խաչիկյանի երեք որդիներից մեկն էր: Ձենոբ Խաչիկյանը Արեւելյան Անատոլիայի Արաբկիր քաղաքից էր, մանկահասակ վերապրող՝ համիդյան ջարդերից, որը հետագայում դարձավ Սուդանի հայ համայնքի ազդեցիկ դեմքերից մեկը՝ որպես առեւտրական: Իմ հայ կին նախնիների մասին գրեթե ոչինչ չգիտեմ, եւ դա ինքնին շատ խոսում փաստ է:



Ալիսիա Խաչիկյան, «Ինչպես կառուցել քարե կույտ, որպեսզի չմոլորվես»

– Ինչպե՞ս եք սահմանում ձեր ինքնությունը՝ իտալահա՞յ, հայկական ծագումով իտալացի՞, թե՞ պարզապես արվեստագետ, որի կենսագրությունը հայկական է:

– Ես ծնվել եմ մեծացել եմ Գորիցիա նահանգում, որը սահմանային եւ պատմականորեն վիճարկվող տարածք է Իտալիայի արեւելյան ծայրամասում: Ծնված օրվանից իմ երկու ազգային պատկանելությունն էլ հաճախ կասկածի տակ էին դրվում, ինչը հաճախ ինձ դնում էր անհարմար վիճակում, բայց միաժամանակ դռներ էր բացում դեպի ավելի հեղհեղուկ եւ անդրազգային աշխարհայացք: Պապիկս՝ Ազատը, որն ակտիվ էր հայ համայնքի կյանքում, հանկարծամահ եղավ 1990 թվականին՝ ընդհատելով մեր հայ մշակութային արմատների հետ կարեւոր կապը: Ինձանց տարիներ պահանջվեցին իմ սեփական ճանապարհը գտնելու համար, եւ այժմ փորձում եմ սովորել արեւմտահայերեն. այն դեռ ընթացքի մեջ է:

– Եթե ձեր ինքնության մասին հարկ լիներ պատմել մեկ լուսանկարի միջոցով, ի՞նչ կպատկերեիք:

– Մտաբերում եմ մի ինքնանկար, որը ստեղծել եմ մի քանի տարի առաջ՝ դոմ-դոլային տպագրության տեխնիկայով եւ որը կրում է «Ինչպես կառուցել քարե կույտ, որպեսզի չմոլորվես» անվանումը: Այն պատկերում է գետերի հուններից հավաքած քարերի մի կույտ, համառ մի ներկայություն, որը միաժամանակ ձեւափոխվող է եւ խոցելի՝ բնության ու ժամանակի ազդեցության առաջ: Ինձ համար այդ քարերը խոսում են ինքնության մասին՝ որպես բազմաշերտ, տարագրային, հոսում եւ բազմազան երեւոյթի...

Այն երկիրը, որտեղ ուզում եմ ապրել

Կա մի հոգնածություն, որը հնարավոր չէ բուժել պարզապես քնով, կամ բժշկական հնարքներով: Դա խորը, էքզիստենցիալ հյուծվածություն է՝ ի տես այն մշտական հասարակությունների, որոնք պառակտում են մեր աշխարհը: Ես հոգնել եմ մարդկային ազահուության եւ նախանձի վրա հիմնված այս պոռթկումներից: Երազում եմ մի նոր աշխարհի մասին, մերժում եմ մարդկանց կողմից արհեստականորեն գծված արհեստական սահմանները: Ես փնտրում եմ մարդու իրական հայրենիքի տարածքը: Իմ աչքի առաջ արշալույսն է, գիշերն է, անտառները, սարերն ու ձորերը, դաշտավայրերն ու ծովերը, լուսինը, արեւը եւ պարզ երկինքը, տիեզերքը: Այս ամբողջը մեզ ցույց է տալիս, թե ինչքան անսահման է եւ մեր փոքրությունն ու մեծությունը, եւ՝ մեր անձեռնմխելի արժանապատվությունը, որը, ի դեպ, պետք է լինի միջանձնային հարաբերությունների միակ եւ գերազույն սահմանը:

Ստորեւ ներկայացված բանաստեղծությունը աշխարհից իրաժարականի տեքստ չէ, այլ արմատական ուսուպիայի նախագիծ: Տեքստը իրաժարվում է ազգային պաթոսից եւ հասարակական համակեցության նոր մոդել է ուղվագծում, որտեղ ուսուպիական տարածքը սահմանվում է ոչ թե աշխարհագրական, այլ բարոյական կոորդինատներով:

Տեքստի եւ իմ մտածողության կենտրոնական թեզը թաքնված է ճշմարտության մասին տողերում. «Տարածություն է այն մարդկանց միջեւ, ովքեր միմյանց սուտ չեն ասում»: Այստեղ բացահայտվում է հետեւյալը. ճշմարիտ քաղաքականությունն ու հասարակությունը ծնվում են հենց այս փխրուն միջանկյալ տարածության մեջ: Մենք ապրում ենք մի դարաշրջանում, որտեղ տիրում է խաբեության, ստի ու կեղծիքի իշխանությունը, որտեղ ճշմարտությունը դարձել է զուտ ռազմավարական փոփոխական: Իսկ իմ երազած երկրում խաբկանքից ու կեղծիքից՝ հրաժարվելը, անկեղծությունն ու ողորմածությունը պետականակերտության գլխավոր նախապայմաններն են:

Այդ իսկ պատճառով բանաստեղծությունը մերժում եւ ապամոնտաժում է իշխանության ավանդական խորհրդանիշները: Իդեալի երկրին զինանշան պետք չէ, նրա դրսեւորումը հացն ու աղը եղբայրաբար կիսելն է: Նրա պաշտպանությունը ռազմական չէ, այլ հոգեւոր. դա հիշողությունն է ու գիտությունը, որն իր մեջ ենթադրում է նաեւ աստվածաճանաչությունը: Օրենքը ոչ թե բազմաէջ հատոր է, այլ հոր լռությունը, որը գիտակցում է մարդը որեւէ մեկի սեփականությունը չէ, այլ սահմանվում է միայն այն անանց արժեքներով, որոնք փոխանցում է հաջորդներին: Լեզվի քերականությունը կրճատվում եւ հասնում է զուտ բարոյականի՝ հազար ու մի տեսակ «Այո»-ների եւ չափին ուղղված «Ոչ»-երի:



ԱՄ-ն՝ արագ ռեժիմով օրենքներ է ընդունում

⇒1 Դրանցից երկուսին անհամաձայն ենք, անհամաձայն են հանրության լայն շերտերը, ու կուզեինք, որ իշխանությունն ակամջալուր լիներ այդ անհամաձայնությանն ու չընդուներ դրանք:

Առաջինն ընտրելու, հանրաքվեներին մասնակցելու համար բնակության ցենզի սահմանումն է օրենսդրական փաթեթով՝ կես տարի ընտրություններին նախորդող ժամանակի ընթացքում երկրում ապրելու պայմանով, որն իրականում մարդու առաջնային սահմանադրական իրավունքի դեմ ոտնձգություն կարելի է համարել (անգամ կառավարության ներկայացուցիչը դա նկատեց): Սա հետևել է այն աղմուկին, ըստ որի Ռուսաստանում բնակվող մեր հայրենակիցները, ոչ առանց շահագրգռության, վերջին խորհրդարանական ընտրություններին ժամանել են Չայաստան եւ իրենց քվեարկությամբ ազդել քվեարկության արդյունքի վրա:

Ե, հայերիս սփռվածությունն աշխարհում հայտնի է, նրանք միայն Ռուսաստան չեն մեկնում, նրանք ամենուր են, եւ, իրոք, այլ կյանք ու մոտեցումներ տեսնելով իրենց կեցության երկրներում՝ նրանք կարող են այլ կերպ նայել մեր ներքին խնդիրներին էլ, ներքաղաքական կյանքին էլ, ավելի լայնահայաց լինել, պրոբլեմների լուծման այլ, ավելի հարուստ մոտեցումների տիրապետել, ու դա ոչ թե վատ է, այլ լավ, դա մեզ ավելի արդիական հանրություն է դարձնում, դուրս բերում նեղմտությունից, կոնդիցիայի ենթարկում մեր ներքին կյանքը: Դա դարձնել պատճառ՝ պահի ազդեցությամբ նրանց ընտրական իրավունքից զրկելու, նրանց երկրորդ դասի քաղաքացի համարելու, նրանց ունեցած ամենաթանկ բանը՝ ընտրության սահմանադրական իրավունքը տեղաշարժի եւ կեցության պայմանով սահմանափակելու, այդպես վերջնականապես հիասթափեցնելու, կտրելու երկրից Ռուսաստանից եկած մոտիվացված ընտրողի որոշ շերտի պատճառով, կարծատեսություն է: Դեռ ուշ չէ, իշխող մեծամասնության ղեկավարները դեռ կարող են լսել շրջափայց կարծիքները եւ չընդունել տաք գլխով պահի տակ մոգոնված այդ փաթեթը, որով (բացառությունների սահմանումն այդ փաթեթով վկա) ոմանք հավասար են Սահմանադրության առաջ, իսկ մյուսներն ավելի հավասար են:

Երկրորդ մեր անհամաձայնությունը վերաբերում է ընտրակաշառք տալու եւ ստանալու սու-



բյեկտների հանդեպ քրեական պատասխանատվությունը հատուկ լրացումներով խստացնելուն: Մեր օրենսդրությունն արդեն ծանր հողավածներով այդ հանցատեսակը որակել է, ի՞նչ իմաստ ունի զուտ հոգեբանական ներգործության համար հատուկ նոր փոփոխություններով խստացնել այդ հանցատեսակի քրեական պատասխանատվության չափը:

Եւ էլի՝ հանրության մեջ մտահոգությունների տեղիք է տվել դեռ կառավարության հավանությանն արժանացած մի նախաձեռնություն՝ խոսքը բջջային հեռախոսների IMEI կոդերի գրանցման պարտադիր համակարգ ներդնելու օրենսդրական փաթեթի մասին է, որով հայկական բջջային ցանցերում կաշխատեն միայն օրինական ներմուծված կամ պետական տուրքի միջոցով գրանցված սարքերը: Փաթեթի ընդունումից հետո չգրանցված հեռախոսները կարգելափակվեն, մարդիկ պարտավոր են գրանցել իրենց կողմից Չայաստան ներմուծված այն հեռախոսները, որոնք արտադրվել են գրանցման մեկնարկի կամ դրան նախորդող տարում: IMEI կոդերի գրանցումը քաղաքացիների համար դառնալու է վճարովի՝ նախատեսվում է պետական տուրքի գանձում, իսկ շարժական կապի օպերատորները պարտավոր են լինելու կասեցնել կամ մերժել ծառայության մատուցումը՝ SIM քարտի ակտիվացումը, եթե հեռախոսի IMEI-ը բացակայում է միասնական պետական բազայից:

Այստեղ բանալի բառը պետական տուրքի գրանցումն է՝ աչքիս բյուջեն այն աստիճան դատարկ է, որ շտապ հարկավոր են այս կարգի հապճեպ միջոցառումներ՝ աչքը սարքելով-ունքը փչացնելով:

Արդյոք այստեղ դեր ունի՞ մասնային, թե ո՞վ է ներկրում հեռախոսները Չայաստանում, թե՞ միգրացիային, որ Չայաստանը դարձել է հեռախոսների ներկրման բիզնեսի տարանցիկ երկիր (ներկրում ու արտահանում են այլ երկիր, Ռուսաստան հիմնականում), հեռախոսների

ներկրումն առետրաշրջանառության հինգ տոկոսն է կազմում: Այստեղ երեւի կարելու է, որ հեռախոսները երկիր բերելիս պետք է մաքսային տուրք վճարել, եւ IMEI համակարգում գրանցել էլ է վճար պահանջելու, այսինքն՝ ամենայն հավանականությամբ, սա դեր ունի՝ բյուջե լցնելու տեսակետից:

Բայց առավել կարելու է, որ մասնագետ շրջանակներին անհանգստացնում է անձնական տվյալների գաղտնիության իրավունքի հնարավոր խախտման չբացառումը՝ հեռախոսներն ընդհանուր շտեմարանում գրանցելիս: Ու չնայած ոլորտի պատասխանատուներից **Ներսես Երիցյանը** փարատում էր մտահոգություններն՝ ասելով, թե ոչ մի նոր ռեժիմ չկա, մինչեւ այժմ գործող օրենքների առումով ոչինչ չի փոխվելու, չի վատանալու, բայց, այ, մասնագետները շարունակում են անհանգստանալ առ այն, որ միասնական համակարգը ցանկացած մեկի անձնական տվյալներին պետական կառույցների հասանելիությունն այժմ արդեն կթուլատրի՝ անցանկալի անձանց եւ նրանց տեղաշարժն առանց խոչընդոտների վերահսկելով (գտնվելու վայր, շփումներ):

Այդպիսով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքում լրացումներ ու փոփոխություններ կատարելու եւ հարակից մի շարք օրենքների նախագծերի փաթեթով պետք է ստեղծվի բջջային հեռախոսների միջազգային նույնականացուցիչների (IMEI) կոդերի միասնական պետական շտեմարան, որն ըստ նախագծի հեղինակների՝ հնարավորություն կտա համադրել մաքսային տվյալները, օպերատորների ակտիվացումներն ու միջազգային ռեգիստրները՝ միայն օրինական ներմուծված հեռախոսների ակտիվացումն թույլատրելով :

Ֆիզիկական անձը պարտավոր է լինելու գրանցել իր կողմից Չայաստան ներմուծած այն բջջային հեռախոսի IMEI-ը, որն արտադրվել է գրանցման մեկնարկի տարվա կամ դրա նախորդ տարվա ընթացքում եւ վճարել պետական տուրք, իսկ շարժական բջջային կապի օպերատորը պետք է մերժի կամ կասեցնի ծառայության մատուցումը, եթե հեռախոսի IMEI-ը գրանցված չէ:

Թե բա՝ կրճատում ենք հեռախոսների ներկրման սեւ շուկան եւ ստվերը:

Մտակա հետընտրական զարգացումներին մոտակա երկու օրը կանդադառնանք:

Իմաստաբանական բառարան

«Թխած ունենալու»

նուրբ արվեստը

Կենդանական աշխարհում, որի մեջ մարդն էլ իր ուրույն տեղն է զբաղեցնում, թքելու հատկությունը համարվել է ուղտի անբեկանելի մենաշնորհը:

Ուղտը սովորաբար առանց պատճառի չի թքում. դրանով նա պաշտպանական վարքագիծ է դրսևորում: Երբ վտանգ է զգում կամ գրգռված է, կարող է մարդու ուղղությամբ արտանետել թքի եւ ստամոքսի պարունակության խառնուրդ: Փաստորեն, ուղտի թքելու նպատակը վախեցնելն ու վտանգը հեռու պահելն է: Բացի այդ, ուղտը թքելու միջոցով երբեմն արտահայտում է իր դժգոհությունը կամ գերիշխանությունը մյուս սապատավորների նկատմամբ:

Կենսաբանները հաստատ գիտեն, որ մարդը եւս, իր կենսաբանական նկարագրից ելնելով, թքելու հատկություն ունի: Սակայն մարդու դեպքում այդ հատկանիշը դրսևորվում է բոլորովին այլ պայմաններում:

❖ **Եղանակային պայմանների մասին տեղեկություն փոխանցելու միջոց**

Օրինակ՝ երբ թքում են գետնին, ու թուրք տեղ չի հասնում, իմացիր, որ սաստիկ ցուրտ է, եւ այն անմիջապես սառչում է: Դրա համար էլ ասում են՝ «թքես գետնին, տեղ չի հասնի»:

❖ **Մարդկանց արժանապատվության աստիճանը ճշգրտելու միջոց**

Երբ մեկի երեսին թքում են, իսկ դիմացինիդ թվում է, թե գարնանային անձրեւ է մաղում, հասկանում են, որ պատվազուրկ մարդու հետ գործ ունեն:

❖ **Թուրք՝ որպես ժամանակի ընթացքը չափելու միջոց**

Եթե քեզ շտապ հանձնարարությամբ որեւէ տեղ են ուղարկում եւ զգուշացնում, որ պետք է վերադառնաս, քանի դեռ թուրք չի չորացել, իմացիր, որ գործն ավարտին հասցնելու համար քեզ հատկացված ժամանակը խիստ սահմանափակ է: Ի վերջո, գետնի վրա թուրք, հատկապես տաք եղանակին, շատ արագ է չորանում:

❖ **Երախտամոռ չլինելու հատկությունն արտահայտելու միջոց**

Այդ մասին է վկայում «չթքել այն ջրհորի մեջ, որից ջուր են խմում» արտահայտությունը, որն ունի թե՛ ուղիղ, թե՛ փոխաբերական իմաստ:

❖ **Սնոտիապաշտական վարքագծի դրսևորում**

Երբ հանդիպում են մեկին, ով «աչքով տալու» հեռանկարից վախեցած իր մտահոգությունը փարատելու համար, ձախ ուսի վրայով մի քանի անգամ հետ նայելով, սկսում է «թյու-թյու» անել, կարող են ենթադրել, որ գործ ունեն հայի, հատկապես՝ ռուսաստանաբնակ հայի հետ:

❖ **Այլոց նկատմամբ գերիշխանություն ցուցադրելու միջոց**

Սովորաբար մարդու երեսին թքող անձը նման քայլի դիմում է անգործության զգացումից ելնելով՝ այդ կերպ փորձելով արտահայտել իր դժգոհությունն ու ցուցադրել իր ենթադրյալ գերիշխանությունը:

❖ **Բումբերանգի էֆեկտն արտահայտելու միջոց**

Եթե ինչ-որ մեկը, առանց հնարավոր հետեւանքները հաշվի առնելու, դեպի վեր է թքում, նշանակում է, որ նա հավանաբար ծանոթ չէ պարսկերեն *tof-e sarbala* («դեպի վեր թքել») արտահայտության իմաստին: Այն հիշեցնում է, որ դեպի վեր թքածը բումբերանգի էֆեկտով վերադառնում է հենց թքողի երեսին:

❖ **5165 մետր բարձրությունից դեպի վար թքելու առանձնահատկությունը**

Այս երեւույթի գրական արտահայտությունը գտնում ենք **Յովհաննես Շիրազի** «Յրաշք» պոեմի համապատասխան հատվածում:

ԳԻՐԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Այն երկիրը, որտեղ ուզում եմ ապրել

⇒5 Ով ցանկանում է ոտք դնել այս երկիր, պետք է ոչ թե մաքսատուրք վճարի, այլ հանի «եսամոլության թագը»: Միայն մեկուսացնող, եսակենտրոն էգոյից հրաժարվելու դեպքում է հնարավոր այն խորը համերաշխությունը, որը ստիպում է յուրաքանչյուրին մասնակցել իր հարեւանի տան կառուցմանը, ոչ թե պարտադրանքով, այլ այն գիտակցումով, որ ամեն մարդ տանիքի, պաշտպանվածության, արժանապատիվ կյանքի կարիք ունի:

Իսկ վերջաբանում այս փիլիսոփայական վերացականությունը վերածվում է իսկական «Քարե պատարագի»՝ մարմնավորվելով հայկական տուֆի նյութականության

մեջ: Տուֆը վերափոխման վերջնական փոխաբերությունն է: Կրակից ու ավերվածությունից ծնված հրաբուխները երկրաբանական ժամանակաշրջանների ընթացքում քար են դառնում: Եվ այդ քարից մարդու ձեռքով կերտվում է տուն, ամրոց եւ աղոթք: Սա հույսի ճարտարապետություն է. անգամ ամենամեծ ավերվածությունից հետո մենք կարող ենք մեր հակամարտությունների մոխրից նոր հիմք կառուցել՝ հասարակության համար, որը բառ առ բառ, քար առ քար հրաժարվում է ցինիզմից եւ սկսում է միասին կառուցել իր ներկան ու կերտել իր ապագան:

ՏԻՐԱՏՈՐ ԲԱՆԱՆԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

Այնքան էլ համաձայն չլինելով մասնավորապես մեր երկիրը Հարավային Կովկաս համարելու տարածված դիրքորոշմանը, այնուամենայնիվ ռուսական ՏԱՍՍ լրատվական գործակալության այս ուշագրավ վերլուծական տվյալներով հոդվածն ընթերցողին թարգմանաբար ներկայացնում ենք որոշ կրճատումներով: Հոդվածի հեղինակը ռուսաստանցի կովկասագետ, պատմագիտության բեկմածու ԴԱՎԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆն է:

Հարավային Կովկասին հետահայացքը ակնառու ցույց է տալիս դարաշրջանի փոփոխությունը. բնակչության 1990-ականների լայնածավալ արտագաղթից եւ 2000-ականների տեղական ճգնաժամների հերթագայությունից հետո տարածաշրջանը 2020-ականներին անցնում է մարդկային կապիտալի վերաբաշխման: Նրա զարգացման առաջիկա տարիների ուղղվածությունը կորոշվի ըստ բնակչության քանակի եւ տարիքային կազմի: Հարավային Կովկասի պետությունները ձգտում են հարմարվել այս ժողովրդագրական փոփոխություններին, բայց արմատապես փոխել իրավիճակն արդեն չի ստացվի: Հենց այս թաքնված, բայց անընդմեջ տեղաշարժն է հիմնական ռազմավարական մարտահրավերը նաեւ Ռուսաստանի շահերի համար:

Ժողովրդագրական միտումներ

Մոտակա 10 տարիների ընթացքում Հարավային Կովկասում ժողովրդագրական հիմնական միտումը կլինի պետությունների միջեւ աճող անհամաչափությունը: Եթե 1990-ականների սկզբին Հայաստանը, Ադրբեջանը եւ Վրաստանն ունեին համադրելի մարդկային ներուժ, այսօր տարածաշրջանում ի հայտ է գալիս կայուն անհամաչափություն:

Ադրբեջանն արդեն անվիճելի ժողովրդագրական առաջատարն է: Պետական վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ նրա բնակչությունը հասել է 10,26 միլիոն մարդու: Չնայած ծնելիության մակարդակի նվազմանը՝ 2023 թվականին՝ 112.600 երեխա՝ 2025 թվականի 95.900-ի դիմաց, երկիրը պահպանում է բնական աճի կայուն մակարդակ, քանի որ ծնունդների թիվը զգալիորեն գերազանցում է մահացության տարեկան մակարդակը, որը մոտավորապես 55.000-60.000 է: Լրացուցիչ առավելություն է մնում համեմատաբար երիտասարդ տարիքային կառուցվածքը. բնակչության միջին տարիքը 34,1 է, իսկ երեխաների եւ դեռահասների բաժինը հասնում է 27-28%-ի:

Հայաստանն ու Վրաստանը ցուցաբերում են արմատապես այլ դիմամիկա: Այն դեպքում, երբ բնակչության պաշտոնական թիվը համապատասխանաբար մոտավորապես 3 մլն եւ 3,91 մլն մարդ է, փաստացի բնակչությունը միջազգային փորձագետների եւ ՄԱԿ-ի գնահատմամբ զգալիորեն պակաս է՝ 2,4-2,5 մլն՝ Հայաստանինը ու 3,1-3,25 մլն՝ Վրաստանինը: Երիտասարդների եւ տնտեսապես ակտիվ քաղաքացիների շարունակական արտահոսքը աճող ծանրաբեռնվածություն է ստեղծում ազգային աշխատաշուկաների, սոցիալական ծառայությունների եւ ժողովրդագրական վերարտադրության վրա:

Առավել բարդ իրավիճակ է ստեղծվում Վրաստանում, որն արդեն մտել է բնակչության կայուն նվազման փուլ:

Տարավային Կովկասի ժողովրդագրական փոփոխությունները՝ մինչեւ 2036 թվականը կանխատեսումով



Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, երկրում ծնունդների թիվը 2021-2025 թվականների ընթացքում 45.100-ից նվազել է մինչեւ 37.800, իսկ 2025 թվականին բնակչության բնական նվազումը հասել է 6.500-ի: Հայաստանն առայժմ պահպանում է բնակչության դրական բնական աճ, սակայն այն 2023 թվականի 11.900-ից 2025 թվականին իջել է մինչեւ 4.700, մինչդեռ ծնունդների թիվը երկար ժամանակվա ընթացքում առաջին անգամ նվազել է տարեկան մինչեւ 30.000-ին մոտ նշագծի:

Ճգնաժամային միտումների մասին է վկայում նաեւ տարիքային կառուցվածքը: Հայաստանում միջին տարիքը 36,6-37,2 տարեկանն է, մինչդեռ Վրաստանում՝ 37,3-37,6-ն է, իսկ 15 տարեկանից փոքր բնակչության համաբաժինը գնահատվում է համապատասխանաբար մոտավորապես 20% եւ 18%: Սա վկայում է Վրաստանում ավելի խոր ժողովրդագրական ծերացման մասին՝ այն դեպքում երբ Հայաստանն առայժմ պահպանում է բնական վերարտադրության մի փոքր ավելի շատ ներուժ:

Եթե ընթացիկ միտումները շարունակվեն, հաջորդ տասնամյակի կեսին մոտ Հարավային Կովկասը վերջնականապես կկորցնի իր ժողովրդագրական հավասարակշռությունը: Ադրբեջանը բնակչության թվով ավելի քան երկու անգամ կգերազանցի Հայաստանին ու Վրաստանին (երեւի միասին վերցրած՝ Գ. Մ.) եւ կպահպանի տարիքային կառուցվածքի զգալի առավելությունը՝ գործնականում դառնալով տարածաշրջանի ժողովրդագրական ծանրության միակ կենտրոնը:

Ադրբեջանի այս գերակշռությունը կնշանակի ավելի մեծ մոբիլիզացիոն ներուժ, ավելի ընդգրկումներ քաղաքացիական պատերազմների, զինված ուժերի, գիտության եւ ազգային տնտեսության աշխատատար ճյուղերի ավելի մեծ կադրային ռեզերվ: Հայաստանի եւ հատկապես Վրաստանի բնակչության շարունակվող ծերացման ֆոնին այս մեծ տարբերությունն անխուսափելիորեն կդառնա ուժերի տարածաշրջանային հավասարակշռության երկարաժամկետ փոփոխության մի հիմնական գործոն:



Մեկ ազլոմերացիայի դեպքումներ

Միեւնույն ժամանակ տարածաշրջանում ուժեղանում է մեկ այլ հիմնարար միտում՝ բնակչության կենտրոնացումը խոշորագույն քաղաքային ագլոմերացիաներում (քաղաքական տակում): Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ երկրի բնակչության մոտավորապես 37%-ն արդեն ապրում է Երեւանում: Հաշվի առնելով չգրանցված ներքին միգրանտներին՝ մայրաքաղաքի բնակիչների իրական մասնաբաժինը կազմում է հանրապետության ընդհանուր բնակչության 40-42%-ը:

Բաքվի ագլոմերացիան (Սումգայիթի եւ Ապշերոնի շրջանի հետ միասին), փորձագետների գնահատմամբ, ներառում է մինչև 4-4,5 միլիոն մարդ՝ երկրի 10 միլիոն բնակչությունից: Զարգացած ենթակառուցվածքները (արագընթաց ավտոմայրուղիներ, մերձքաղաքային երկաթուղային հաղորդակցություն) Ապշերոնի թերակղզին (2.110 քառակուսի կիլոմետր) վերածել են միասնական մեգապոլիսի, որտեղ ամեն օր արվարձաններից դեպի Բաքվի կենտրոն աշխատանքի եւ հետ է գնում ավելի քան մեկ միլիոն մարդ: Սա զարմանալի չէ, եթե հաշվի առնենք, որ Բաքվում արտադրվում է Ադրբեջանի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մոտավորապես 76-77%-ը, յուրացվում է բոլոր ներքին ներդրումների ավելի քան 80%-ը եւ ձեւավորվում է նավթային հարկային եկամուտների մոտ 85%-ը:

Թբիլիսին ցուցաբերում է երեւանին նման գերկենտրոնացման տեմպ: Մայրաքաղաքի մշտական բնակչու-

թյան թիվը 2024 թվականի մարդահամարի տվյալներով 1,33-1,37 մլն մարդ է՝ Վրաստանի հայտարարվող 3,93 մլն բնակչության պարագայում: Ստացվում է, որ մայրաքաղաքում արդեն ապրում է երկրի բոլոր գրանցված քաղաքացիների թվի մոտավորապես 34-35%-ը կամ հանրապետության յուրաքանչյուր երրորդ բնակիչը: Ըստ կանխատեսումների, եթե ներքին շրջաններից (օրինակ՝ Իմերեթի, Կախեթի կամ Սամեգրելո) երիտասարդության ներկայիս արտահոսքը շարունակվի, 2030-ականների կեսերին Թբիլիսիի ագլոմերացիան պաշտոնապես կգերազանցի երկրի բնակչության 45%-ը: Փաստորեն Հարավային Կովկասը շարժվում է դեպի «մեկ մայրաքաղաքի պետության» մոդելը:

Տարավային Կովկասի սփյուռմանից մինչեւ համայնքներ

Ռուսաստանի համար այս գործընթացների հետեւանքներն ունեն ոչ միայն արտաքին քաղաքական, այլեւ ներքին նշանակություն: Ժողովրդագետների գնահատմամբ, Ռուսաստանում հայ համայնքի փաստացի թիվն այսօր հասնում է 1,8-2 մլն մարդու, ադրբեջանական համայնքինը՝ մոտ 1-1,2 մլն, իսկ վրացական համայնքինը՝ 350.000-ից մինչեւ 500.000-ի: Երկուսն էլ,

բնակչության 2021 թվականի համառուսաստանյան մարդահամարն արձանագրել է եականորեն պակաս ցուցանիշներ՝ մոտ 946.000 հայ, 475.000 ադրբեջանցի եւ մոտ 113.000 վրացի:

Եվ այս միգրացիոն ռեսուրսն աստիճանաբար սպառվում է: Պատճառը ինչպես Ռուսաստանի ներքին միգրացիոն քաղաքականության փոփոխությունն է, այնպես էլ հենց Կովկասի ժողովրդագրական կառուցվածքը: Հայաստանում եւ Վրաստանում գնալով նվազում է զանգվածային աշխատանքային միգրացիային մասնակցելու ունակ եւ ցանկություն ունեցող երիտասարդների թիվը: Ադրբեջանն, ընդհակառակը, ավելի ու ավելի ակտիվ է օգտագործում իր սեփական մարդկային կապիտալը՝ այն նպատակաուղղելով խոշորածավալ ենթակառուցվածքային եւ տրանսպորտային նախագծերի վրա:

Սա չի նշանակում Ռուսաստանում Հարավային Կովկասի գործոնի թուլացում: Ընդհակառակը, դրա նշանակությունը կաճի, բայց այլ ձևով: Հաջորդ տասնամյակի կեսերի կողմ հարավկովկասյան սփյուռքներն աստիճանաբար կվերափոխվեն կայուն ներքին համայնքների, որոնց մեծ մասն այլեւս առաջին սերնդի միգրանտներ չեն լինի, այլ այնտեղ ծնված Ռուսաստանի քաղաքացիներ:

Մինչև 2036 թվականը այս համայնքների անդամների քանակը, հավանաբար, կորստելորի համեմատական կայունությունն՝ հնարավոր չափավոր անկմամբ՝ ի հետեւանս բնական ժողովրդագրական գործընթացների, ծուլման եւ միգրացիոն հոսքերի աստիճանական վերափոխման:

Թարգմանեց ԳԵՂԱՄ ՄԿՐՏՅԱՆԸ

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՁՅԱՆ

Հունիսի 26-ին այս վերնագրով հոդված է հրապարակվել եգիպտոսյան «Ալմասրի Ալյոում» (Almasry Alyoum) թերթում: Թուրքիայի արտաքին գործերի նախարար **Հաքան Ֆիդանի** այցը Մոսկվա 2026 թվականի հունիսի 15-ից 17-ը, որը կազմակերպվել էր նրա ռուս գործընկեր **Սերգեյ Լավրովի** հրավերով, պարզապես սովորական դիվանագիտական այց չէր, գրում է թերթը: Հանդիպման հենց ժամանակի ընտրությունն էր ընդգծում դրա հատուկ նշանակությունը. Ուկրաինայում շարունակվող զինված հակամարտությունը, Սեւ ծովում լարվածության սրման պահպանվող ռիսկերը, Սիրիայում Ասադի ռեժիմի անկումից հետո Մերձավոր Արեւելքում ուժերի հավասարակշռության փոփոխությունը, Հարավային Կովկասում նոր համաձայնությունները, ինչպես նաեւ էներգետիկ եւ ծովային անվտանգության հարցերը՝ Սեւ ծովից մինչեւ Հորմուզի նեղուց, կազմում են փոխապակցված մարտահրավերների մի բարդ ամբողջություն:

Այցը տեղի ունեցավ ՆԱՏՕ-ի գազաթնաժողովից ընդամենը մի քանի շաբաթ առաջ, որը Թուրքիան նախատեսում է հյուրընկալել հուլիսի սկզբին: Սա այն դարձնում է յուրահատուկ ուղեծր՝ ուղղված եւ Մոսկվային, եւ Արեւմուտքին:

Մոսկվայի եւ Անկարայի միջեւ հարաբերությունները, ինչպես նշվում է հրապարակման մեջ, ոչ դաշինք են, ոչ էլ առճակատում, այլ շահերի բարդ հավասարակշռում, որում միահյուսվում են համագործակցությունը, մրցակցությունը եւ տարածայնությունները

«Հաֆան Ֆիդանի այցը Մոսկվա: Ինչո՞ւ է ռուս-թուրքական համակարգումը դարձել սարածաւերջանային եւ միջազգային անհրաժեշտություն»

պրագմատիկ կարգավորումը: Փոխգործակցության այս մոդելը դուրս է պարզ դիվանագիտական հռետորաբանությունից եւ թույլ է տալիս ավելի լավ հասկանալ, թե ինչու են ռուս-թուրքական հարաբերությունները կայունություն պահպանում նույնիսկ հիմնական հարցերի շուրջ լուրջ տարակարծությունների առկայության դեպքում: Չնայած պարբերական ճգնաժամներին ու լարումներին, երկու կողմերն էլ շարունակում են պահպանել երկխոսությունն ու աշխատանքային շփումները:

Անկարայի գլխավոր առավելությունը, նկատում է թերթը, նրա եզակի դիրքն է, որը չունեն եվրոպական շատ մայրաքաղաքներ: Այն ՆԱՏՕ-ի անդամ է եւ Արեւմտյան անվտանգության համակարգի մաս, բայց ընդամենն պահպանում է Մոսկվայի հետ հաղորդակցության ուղիղ եւ բաց ուղիներ:

Սա Թուրքիային հազվագյուտ հնարավորություն է տալիս միաժամանակ պահպանել կապը Կրեմլի, Կիեւի եւ Արեւմտյան երկրների հետ՝ այն դարձնելով այսօր փոխադարձ վստահության ցածր մակարդակ ունեցող կողմերի միջեւ երկխոսության սակավաթիվ հարթակներից մեկը: Ավելի ու ավելի բազմաբեւեռ դարձող աշխարհում այս դերը դառնում է էական առավելություն Թուրքիայի համար՝ իր աշխարհագրական դիրքի եւ ռազմական ներուժի հետ մեկտեղ:



րական դիրքի եւ ռազմական ներուժի հետ մեկտեղ:

Ուկրաինական ճգնաժամը, հոդվածագրի վկայությամբ, այցի հիմնական թեման էր: Դիվանագիտական աղբյուրների համաձայն, Անկարան վերահաստատել է Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ բանակցությունների նոր փուլ անցկացնելու իր առաջարկը: Քննարկված սեւծովյան անվտանգության եւ նավարկության ազատության, Մերձավոր Արեւելքի, Սիրիայի, էներգետիկ անվտանգության եւ Հորմուզի նեղուցի, տնտեսական շահերի հետ մեկտեղ այցի օրակարգում կարեւոր տեղ է հատկացված եղել մեր տարածաշրջանին, ներառյալ Հայաստան-Ադրբեջան գործընթացը: Տարածաշրջանը դարձել է կարեւոր աշխարհաքաղաքական խաչմերուկ, որը կապում է Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի, Կենտրոնական Ասիայի ու Եվրոպայի շահերը: Չնայած երկու կողմերն էլ շահագրգռված են թույլ չտալ այս շրջանի բաց առճա-

կատման գոտի դառնալը, բայց եւ նրանց միջեւ շարունակվում է մրցակցությունը առեւտրային ուղիների, տրանսպորտային նախագծերի եւ էներգետիկ ենթակառուցվածքների նկատմամբ ազդեցության ու վերահսկողության համար, ասվում է հոդվածում: Թուրքիան ձգտում է նաեւ դառնալ Հարավային Կովկասի առեւտրային ուղիների կա-

րեւոր հանգույց: Ռուսաստանն իր հերթին հասկանում է, որ Անկարայի հետ երկխոսությունը նրան տրամադրում է ՆԱՏՕ-ի, Մերձավոր Արեւելքի եւ տարածաշրջանային շուկաների հետ կապի կարեւոր ուղի:

Այսպիսով, եզրակացնում է հեղինակը, Հարավային Կովկասում ռուս-թուրքական համակարգումը ոչ այնքան ռազմավարական շահերի մերձեցում է, որքան երկու երկրների միջեւ առկա մրցակցությունը կառավարելու մեխանիզմ:

Հաքան Ֆիդանի այցը Ռուսաստան, թերթի ձեւակերպմամբ, հաստատում է, որ Անկարայի եւ Մոսկվայի միջեւ համագործակցությունն արդեն երկրորդական դիվանագիտական ընտրանք չէ, այլ դարձել է ռազմավարական անհրաժեշտություն մի աշխարհում, որտեղ առաջատար տերությունների միջեւ վստահությունն աստիճանաբար թուլանում է:

Գ. Մ.


ՀՐԱԾՅԱ ԳԱԼՍՏՅԱՆ

Արվեստաբան
ԳԱԹ-ի ցուցահանդեսի համադրող

Հունիսի 19-ին Ե. Չարենցի անվան Գրականության եւ արվեստի թանգարանում (ԳԱԹ) կայացավ «Philosophical Cube: Reconnection» ցուցադրությունը: Այն տարբեր արվեստագետների միասնական նախագիծ է եւ գործելու է մինչեւ սույն թ.-ի հուլիսի 19-ը:

Ցուցադրությունը բաղկացած է խորանարդից եւ երկու օժանդակ օբյեկտներից՝ զծից եւ քառակուսուց: Աշխատանքները բաղկացած են կարբոնե թիթեղներից, ադամանդից, գրաֆիտից ու մետեորիտից: Դրանցից յուրաքանչյուրը՝ թե՛ իր կառուցվածքով, թե՛ չափերի համամասնությամբ սրբորեն հետեւում է երկրաչափական սիմետրիային, արդյունքում գիծն ու քառակուսին «հանդիպում» են իրար ու ամբողջացնում խորանարդը, այստեղից էլ ցուցադրության խորագիրը՝ Reconnection («Վերամիավորում»):

Ցուցադրության օժանդակ օբյեկտները, որոնք կարող են վրիպել դիտորդի աչքից՝ ամբողջացնում են խորանարդը: Հերթով անդրադառնա՞նք դրանցից յուրաքանչյուրին:



Այստեղ հարց է առաջանում, թե որտե՞ղ է գտնվում մարդն այդ զծի վրա: Նա կարող է լինել ինչպես այդ զծի սկզբում, այնպես էլ մեջտեղում կամ ավարտին: Այս ցուցադրության շրջանակներում գիծը խորհրդանշում է ներկան, ոչ այնքան պահը, որքան այն գաղափարը՝ այս դեպքում խորանարդը, որը ցուցադրության առանցքն է հանդիսանում: Գիծը ծնունդ է կապը, եւ հենց այդ կապի մասին է խոսում քառակուսին:

Քառակուսին, որը գտնվում է երկչափ հարթության վրա, կարող ենք դիտարկել որպես կատարյալ երկրաչափական օբյեկտ: Դրա բոլոր կողմերը հավասար են, բոլոր անկյուններն՝ ուղիղ: Այն, ինչպես գիծը, պարզ է, սակայն, ի տարբերություն դրա, այն արդեն գոյություն ունի երկչափ հարթության մեջ ու կազմված է երկարությունից ու լայնությունից: Այժմ էլ մենք գտնվելով խորանարդի մեջ՝ կանգնած ենք քառակուսի հարթության վրա: Միաչափ տարածությունում զծի վրա գտնվող կետը, միայնակ գտնվելով քառակուսում, կարող է առնչվել բազում այլ կետերի, ինչպես, օրինակ, ցուցադրությունում են մարդիկ

Բուն փիլիսոփայական Խորանարդ

առնչվում միմյանց: Այսպիսով, եթե գիծն իրենից ենթադրում է ժամանակի ընթացքում մարդու անցած ճանապարհը, այս դեպքում՝ ներկան, ապա քառակուսին իրենից ենթադրում է այն հարթությունը, որում այժմ գտնվում են բազմաթիվ կետեր ու որոնք հաղորդակցվում են միմյանց հետ:

Անդրադառնա՞նք խորանարդին: Արվեստագետի Փիլիսոփայական խորանարդը պատկերում է այն կաղապարը, որը կանգնած է արտաքին իրականության ու մարդկային ներաշխարհի միջեւ: Այն ինքնատիպ փոխաբերություն է, որտեղ մարդու ներաշխարհի ու արտաքին իրականության սահմանները մշուշվում են: Փիլիսոփայական խորանարդի գաղափարը հեղինակի մեջ ծագել է արվեստի միջոցով մարդկային բնույթի արտահայտման եղանակների վերաբերյալ խորը մտորումներից հետո: Խորանարդը դարձել է մի սահմանի խորհրդանիշ, որից այն կողմ սկսվում է աշխարհի նոր ընկալումը՝ թույլ տալով մարդուն դիտարկել իր ներքին ապրումներն այլ տեսանկյունից: Այս խորանարդը մենք կարող ենք որպես մարդու ներքին պայքար դիտարկել, որը չի ընդունում արտաքին աշխարհն ու ընդվզում է դրա դեմ: Խորանարդ երկրաչափական մարմինն՝ առանց արտաքին միջամտությունների, իր անկյան վրա կանգնեցնելն անհնար է: Այստեղ է, որ երեւան է գալիս մարդու ներաշխարհի գործոնը՝ ներքին կամքը: Այն օգնում է, որ խորանարդը, որն այս դրույթում իրենից ներկայացնում է մարդու, որն ընկած է արտաքին ու ներքին սահմանների մեջտեղում (եր-

կու քարի արանքում) «ոտքի կանգնել»: Այստեղ գիծը՝ մարդու անցած ճանապարհն ու ժամանակը, քառակուսին՝ նրա գտնվելու վայրն ու արտաքին ազդեցությունները, խաչվելով իրար հետ՝ ստեղծում են խորանարդը՝ մարդու կաղապարը, որը կարծրանում է, փակվում է իր ներսում, որ նորովի ներկայանա աշխարհին: Ամուր կանգնելով երկու ոտքերի կամ մի անկյան վրա՝ նա հրաժարվում է վայր ընկնել ու առեւտելվում է իրականությանը ոչ թե որպեսզի գոյատեւի դրանում, այլ՝ որ դրա դեմ պայքարում հաղթանակ տանի:

«ԱԶԳ» ՀԱՐԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԵ տարի

Հրատարակիչ
«ՎԱՅՆ ԹԵՔԵՅԱՆ»
**սոցիալ-մշակութային
հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա,
Տարածք 48, Երեւան 0001
e-mail: info@azg.am
azgdaily@gmail.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԻԵՏԻՔԵԱՆ
Հաշվապահութիւն((գովազդ)
հեռ..**091 582960**
Համակարգչային շարուածքը՝
«Ազգ» թերթի

Թերթի միւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելոււ են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսոււմ ու չեն վերադարձոււմ:

“AZG” Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960